սաստիկ վախեցայ, կարծում էի, թէ կորաւ նա: Բայց քանի որոպէից յետոյ կրկին յայտնուեցաւ նա եւ սկսեց լողալ դէպի կղզին, իր ետեւից քարշ տալով նաւակը:

Ասլանը շարած մնաց:

Կղզին այժմ պարզ երեւում էր: Մառախուղի միջից, ես նշմարում էի աբեղաների մռայլ կերպարանքները, որոնք, ափի մօտ կանգնած, իրանց ջերմեռանդ, աղերսաւոր ձեռքերը տարածել էին դէպի երկինքը:

Մի քանի անգամ ալիքները այնպէս սաստկութեամբ անցան նաւակի վրայից, որ փոքր էր մնում, մի թեթեւ փետուրի նման, մեզ ողողէին եւ իրանց հետ տանէին: Ես բնազդմամբ բռնեցի դրօշակի թոյլ ձողից: Ասլանը ծիծաղեց:

— Մի վախիր, — ասաց նա, — կղզին մօտ է:

— Բերզէն-օղլու ջանքերն իզուր անցան, — յանկարծ խօսքը փոխեց նա, եւ մի անսովոր անհանգստութիւն երեւաց նրա դէմքի վրայ: — Պարանը կտրուեցաւ...

Այնուհետեւ ի՞նչ պատահեց, ի՞նչ կատարուեցաւ մեզ հետ, ես մինչեւ այսօր էլ չեմ կարողացել ճիշտ կերպով պատկերացնել իմ մտքում: Այսքանը միայն աղօտ կերպով յիշում եմ, որ կոհակները կրկին բարձրացան, եւ ես, ինչպէս երազի մէջ, զգացի, որ նաւակը այլեւս իմ ոտների տակին չէր. ես ընկղմուած էի ջրի մէջ, մրրկածուփ ալիքները խաղացնում էին ինձ, երբեմն դէպի յատակը տանելով, երբեմն դէպի վեր բարձրացնելով, եւ այդ ժամանակ, կարծես մի աներեւոյթ զօրութիւն ինձ պինդ բռնած ունէր: Երկար մենք տարուբերուում էինք ջրային տարերքի մէջ, բայց զօրութիւնը ինձանից չէր բաժանուում:

Այդ զօրութիւնը ինձ դուրս հանեց կղզու վրայ, բոլորովին անզգայացած եւ կիսաշունչ դրութեան մէջ: Եւ դա ուրիշ ոչ ոք չէր, բայց միայն իմ ազատիչը, իմ բարեկամը՝ Ասլանը: Երբ աչքերս բաց արի, երբ փոքր-ինչ ուշքի եկայ, ինձ մի խումբ աբեղաներից շրջապատուած գտայ: Նրանք անդադար փառք էին տալիս աստծուն, որ ազատուեցանք:

ԺԱ. ԿՏՈՒՑ ԱՆԱՊԱՏ

Աբեղաները մեզ տարան իրանց վանքը եւ հանգստացրին: Խուցերից ամենայարմարը պատրաստեցին մեզ համար, իսկոյն կրակ վառեցին, տաքացանք եւ սկսեցինք բուխարու առջեւ մեր հագուստները չորացնել: Բեր-